ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

«ԳԱՐԳԱՌԻ Վ. ԲԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 ԹԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ..... 4

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 23

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 26

5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 28

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ..... 34

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ 36

8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ 43

9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ 45

10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ..... 47

11. ՎԵՐՋԱԲԱՆ 49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ դպրոց) 2023-2028 թվականների զարգացման ծրագրի մշակման համար օրենսդրական հիմք են ընդունվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-Ն և 2023 թվականի ապրիլի 18-ի N 399-Ա հրամանների պահանջները:

Դպրոցի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերն են.

1. դպրոցի ներքին գործունեության վերջին 2 ուսումնական տարիների հաշվետվությունը,
2. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»,
3. «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի» նախագիծը:

Ծրագրի հիմքում դրվել են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը: Ծրագիրն ուղղված է դպրոցի առաջանցիկ զարգացման իրականացմանը՝ նախանշելով զարգացման գերակա ուղղություններն ու ռազմավարությունները, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեության ներքին գնահատման արդյունքներից:

Ծրագրի հիմնամեխը դպրոցի զարգացման նոր ուղիներ գտնելն է, որոնք պետք է նպաստեն սովորողի ներդաշնակ զարգացմանը, կարողունակ քաղաքացու ձևավորմանը, ով կունենա ազգային արժանապատվության խոր գիտակցություն, ազգային արժեքների արժևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն, կկարողանա ինտեգրվել սոցիումին ու կունենա իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական հաստատության առաքելությունը ցանկալի ապագայի մտապատկերն է, որը ենթադրում է ազգային հենքի վրա որակյալ կրթության ապահովում և բազմակողմանիորեն զարգացած, հայրենասիրական որակներով հարուստ, կյանքի դժվարին իրավիճակներում կողմնորոշվող և ճիշտ որոշումներ ընդունող անձի ձևավորում:

Դպրոցի առաքելությունը ենթադրում է՝

- Ժամանակի պահանջներին համապատասխան սերունդի կրթումն ու դաստիարակումը,
- Հանուն պետության և ազգի անվտանգության ապահովման մարտահրավերներին դիմակայելու և պայքարելու պատրաստ և ունակ մարդու ձևավորումը,
- Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացումը,
- Ազգային գաղափարախոսության կրող և համաշխարհային մշակութային կյանքին ինտեգրված քաղաքացու դաստիարակումը, ով ունակ կլինի դիմագրավելու ժամանակակից մարտահրավերներին և իր ավանդը ներդնելու հայկական մշակույթի զարգացման և համաշխարհային հարթակներում այն ներկայացնելու գործին,
- Յուրաքանչյուր սովորողի համար այնպիսի բարոյահոգեբանական միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է դրսևորել իր կարողություններն առավելագույն ձևով:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

❖ Ընդհանուր տեղեկություններ

«ՀՀ Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

«ՀՀ Լոռու մարզի Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 22.01.2003 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում (վկայական՝ 03 Ա-057005, գրանցման համար՝ 92.210.00462, իրավաբանական անձի ծածկագիր՝ 10005205): Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 05.10.2010 թվականին: ՀՀ ԿԳ նախարարի 30.05.2011 թվականի N 617-Ա/Ք հրամանով, ՀՀ ԿԳ նախարարի 18.03.2019 թվականի N 218-Ա/2 հրամանով և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 02.09.2021 թվականի N 1445-Ա/2 հրամանով դպրոցին տրվել են նախադպրոցական կրթական, տարրական հանրակրթական, հիմնական հանրակրթական և միջնակարգ հանրակրթական ծրագրեր իրականացնելու իրավունքի լիցենզիաներ:

Դպրոցի փոստային հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք գ. Գարգառ 13-րդ փողոց շենք 3:

Դպրոցի պաշտոնական կայք-էջի հասցեն է՝ gargar.schoolsite.am, էլեկտրոնային փոստի հասցեն՝ gargarschool@yandex.com:

Դպրոցի աշխատանքային շաբաթը 5-օրյա է, աշխատանքային ռեժիմը՝ երկհերթ:

❖ Շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան

Դպրոցի շենքը ոչ տիպային է և լիարժեքորեն չի բավարարում կրթական կարիքներին: Այն կառուցվել է 1987 թվականին որպես Գարգառ գյուղի մանկապարտեզ: Սակայն 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո մանկապարտեզը տեղափոխվել է այլ տարածք, իսկ շենքը ավելի քան 10 տարի չի օգտագործվել: 1999 թվականին շենքը վերակառուցվել է և սկսել է ծառայել որպես դպրոցի շենք: 2005 թվականին կառուցվել է դպրոցի մարզադահլիճը:

Դպրոցի շենքի ընդհանուր մակերեսը 1409.6 մ² է, մարզադահլիճի մակերեսը՝ 273.2 մ²: Դպրոցի գրադարանը գտնվում է շենքի տարածքից դուրս, դպրոցի նախկին փայտաշեն շենքի տարածքում և զբաղեցնում է 30.2 մ² մակերես: Դպրոցն ունի ընդարձակ նկուղ՝ 1010 մ² տարածքով, որը անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես ապաստարան: Դպրոցի շենքի շրջակա տարածքը համեմատաբար փոքր է՝ 1560 մ², որից 240 մ²-ը մշակվում է որպես այգի: Տարածքը ամբողջությամբ ցանկապատված է:

Դպրոցում առկա են 11 դասասենյակ, 2 աշխատասենյակ, 1 հանդի-սությունների դահլիճ (հարմարեցված), 1 համակարգչային սենյակ, 1 խոհանոց, 3 սանհանգույց:

Տարածքի անվանումը	Մակերեսը
Դասասենյակ 1-ին, 2-րդ դաս.	32.8
Դասասենյակ 3-րդ դաս.	35.8
Դասասենյակ 4-րդ դաս.	41.2
Դասասենյակ 5-րդ դաս.	40.0
Դասասենյակ 6-րդ դաս.	25.7
Դասասենյակ 7-րդ դաս.	41.3
Դասասենյակ 8-րդ դաս.	41.3
Դասասենյակ 9-րդ դաս.	59.5
Դասասենյակ 10-րդ դաս.	17.6
Դասասենյակ 11-րդ դաս.	13.7
Դասասենյակ 12-րդ դաս.	26.7
Նախակրթ. խմբասենյակ և խաղասենյակ	83.2
Տնօրենի աշխատասենյակ	18.2
Ուսուցչանոց	39.7
Հանդիսությունների դահլիճ	47.4
Համակարգչային սենյակ	39.7
Խոհանոց	46.4
Սանհանգույց 1	7.8
Սանհանգույց 2	4.2

Սանհանգույց 3	1.8

Դպրոցի շենքը




Դպրոցի միջանցքները



Համակարգչային սենյակ




Խոհանոց

Սպորտդահլիճ

Շենքն ունի ընդհանուր վերանորոգման կարիք: Առավել անմխիթար վիճակում է գտնվում մարզադահլիճը, որն ունի հատակի նորոգման կամ փոխարինման կարիք: Դպրոցական գույքի մեծ մասը հնամաշ և վնասված է: Թեև շենքում առկա է ջրամատակարարում, սակայն այն գործում է ընդհատումներով, ինչը լրացուցիչ անհարմարություններ է ստեղծում:

Չնայած ֆինանսական սուղ միջոցներին, գրեթե ամեն տարի հնարավորության սահմաններում կատարվում են ընթացիկ նորոգման և գույքի թարմացման աշխատանքներ: Օրինակ՝ 2023 թվականի ընթացքում փոխարինվել է դպրոցի դարպասը, նորոգվել են միջանցքները, թարմացվել են մեկ դասասենյակի աշակերտական սեղանները և նստարանները: Մինչև տարեվերջ նախատեսում ենք իրականացնել նաև ջրամատակարարման ցանցի և սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ:

Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցը ընդգրկված է ՀՀ Կառավարության 2021-2026 թթ.-ի ծրագրով ամրագրված 500 մանկապարտեզի և 300 դպրոցի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրում, որի շրջանակում նախատեսված է, որ մինչև 2026-2027 ուսումնական տարվա մեկնարկը դպրոցը

կունենա նորակառույց շենք, ինչը կլուծի մի շարք խնդիրներ և ուսումնական պրոցեսը հնարավոր կլինի կազմակերպել շատ ավելի հարմարավետ, հաճելի և ապահով միջավայրում:

Շենքային պայմանների վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Դպրոցը գազաֆիկացված է, ունի կենտրոնացված ջեռուցման համակարգ: ✓ Դպրոցի տարածքը ցանկապատ-ված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժի համար: ✓ Առկա է թեքահարթակ: ✓ Դպրոցի բոլոր պատուհանները վերջին տարիներին փոխարինվել են նորերով: ✓ Առկա է ապաստարան:	✓ Դպրոցի շենքը ոչ տիպային է: ✓ Դասասենյակներն ու առանձնասենյակներն ունեն վերանորոգման և ներքին հարդարման կարիք: ✓ Կա դասասենյակների պակաս, ինչի պատճառով դասապրոցեսը կազմակերպվում է երկհերթ ռեժիմով: ✓ Բակային տարածքը փոքր է: ✓ Հանդիսությունների դահլիճը հարմարեցված է և ոչ միշտ է բավարարում այնտեղ անցկացվող միջոցառումների կարիքներին: ✓ Չկա մարզահրապարակ: ✓ Մարզադահլիճում բացակայում է ջեռուցումը: ✓ Կա առարկայական լաբորատորիաների պակաս, իսկ դպրոցի միակ՝ ֆիզիկայի լաբորատորիան ունի լուրջ վերազինման կարիք: ✓ ՆԶՊ, շախմատ առարկաները, առարկայական սենյակների բացակայության պատճառով, դասավանդվում են դասասենյակներում:

	✓ Գրադարանը գտնվում է դպրոցի նախկին փայտաշեն մասնաշենքում, դպրոցի շենքից մոտ 150 մետր հեռավորության վրա, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում:

Նյութատեխնիկական պայմանների վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Առկա են բավարար քանակով աշակերտական նստարաններ: ✓ Խոհանոցն ապահովված է անհրաժեշտ սարքավորումներով և սպասքով: ✓ Առկա է ֆիզիկայի լաբորատորիա: ✓ Առկա է ինտերնետ կապ:	✓ Դպրոցական գույքի զգալի մասը հնամաշ է: ✓ Կա պահարանների և գրատախտակների կարիք: ✓ Չկան բավարար քանակով համակարգիչներ: ✓ Դպրոցը չունի պրոյեկտոր: ✓ Մարզագույքի ոչ բավարար քանակ: ✓ Լաբորատոր և դիդակտիկ նյութերի, ուսումնական պաստառների, քարտեզների մաշվածություն և ոչ բավարար քանակ: ✓ Գրադարանում ժամանակակից գրականության ոչ բավարար քանակ:

❖ **Նորմատիվ փաստաթղթեր**

Դպրոցն ունի ԿԳՄՍՆ կողմից հաստատված պարտադիր առկայության և գործածության ենթակա բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան՝

1. Պետական գրանցման վկայական,
2. Դպրոցի կանոնադրություն,

3. Լիցենզիա՝ ըստ կրթական ծրագրերի աստիճանի և սահմանային տեղերի,
4. Դպրոցի զարգացման ծրագիր,
5. Առարկայական ծրագրեր,
6. Ներքին կարգապահական կանոններ,
7. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան,
8. Հաշվետվություն դպրոցի ամենամյա գործունեության մասին,
9. Դպրոցի շենքի սեփականության վկայական,
10. Սովորողների շարժի մատյան,
11. Սովորողների անձնական գործ (էլեկտրոնային),
12. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան,
13. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան,
13. Աշխատողների հրամանագիրք,
14. Աշակերտների հրամանագիրք,
15. Աշխատողների անձնական գործ (էլեկտրոնային),
16. Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդական միավորումների, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյաններ,
17. Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ,
18. Հաստիքացուցակ,
19. Տարիֆիկացիոն ցուցակ (էլեկտրոնային),
20. Ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան:

Վերոնշյալ փաստաթղթերը լրացվում են՝ համաձայն խորհրդակցական մարմինների, մանկավարժական խորհրդի, աշակերտական խորհրդի, առարկայական մեթոդմիավորումների օրինակելի կանոնադրությունների հիման վրա մշակված կանոնադրությունների, որտեղ նկարագրվում է յուրաքանչյուր փաստաթղթի վարման գործընթացը և նշվում պատասխանատու անձը:

❖ Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցում գործում են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները.

- Կառավարման խորհուրդ (միացյալ Ամրակիցի միջնակարգ դպրոցի և Պուշկինոյի հիմնական դպրոցի հետ)՝ 19 անդամ,
- Մանկավարժական խորհուրդ՝ 25 անդամ,
- Ծնողական խորհուրդ՝ 12 անդամ,
- Աշակերտական խորհուրդ՝ 14 անդամ:

Բոլոր խորհրդակցական մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը՝ մշակված օրինակելի կանոնադրությունների հիման վրա:

Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Կառավարման մարմինը գործում է հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան: ✓ Կառավարման խորհրդի անդամները միշտ պատրաստակամ են տնօրենի և մյուս խորհրդակցական մարմինների հետ համագործակցությանը: ✓ Խորհրդի անդամների և տնօրենի միջև ձևավորվել է հարգալից, աշխատանքային և արդյունավետ միջավայր: ✓ Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են սահմանված պարբերականությամբ, խորհրդի անդամները մշտապես տեղեկացված են դպրոցում իրականացվող և նախատեսվող գործընթացներին և սատարում են ընթացիկ խնդիրների լուծմանը:	✓ Խորհրդի անդամների զբաղվածության պատճառով երբեմն խորհրդի նիստերի ժամանակ լինում են բացակայություններ: ✓ Երբեմն խորհրդի անդամների մոտ նկատվում է նախաձեռնողականության պակաս:

❖ **Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ**

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը՝ համատեղ շաբաթօրյակ, ծառատունկ, հանդիպումներ: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին և տոնակատարություններին:

Բավականին սերտ և արդյունավետ է նաև դպրոց-ծնող համագործակցությունը: Ծնողական խորհուրդը ակտիվորեն ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում և մշտապես իրազեկ է դպրոցի նորություններին, նախաձեռնություններին ու միջոցառումներին:

ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, այլ կառավարման մարմինների և դպրոցի համագործակցության վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Դպրոցի արդյունավետորեն համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, Լոռու մարզպետարանի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ: ✓ Դպրոցը հանդիսանում է մենթոր դպրոց և սերտորեն համագործակցում է ԿԶՆԱԿ-ի հետ՝ կազմակերպելով նոր ՀՊՉ-ի վերաբերյալ և այլ թեմաներով սեմինարներ ու վերապատրաստումներ, որին մասնակցում են տարածաշրջանի դպրոցների մանկավարժները: ✓ Դպրոցի աշակերտներն ու ուսուցիչները պատրաստակամորեն և ակտիվությամբ մասնակցում են համայնքային միջոցառումներին և ծրագրերին, հաճախ հանդես գալով որպես այդ միջոցառումների նախաձեռնող և իրականացնող: ✓ Դպրոցի աշակերտները հաճախակի մասնակցում են ՎՊՀ-ում կազմակերպվող տարբեր միջոցառումների և մրցույթների: Իսկ համալսարանի ուսանողներից ոմանք իրենց պրակտիկան անցկացրել են Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում:	✓ Չնայած ցանկությանն ու երկկողմ պատրաստակամությանը, ոչ միշտ է հաջողվում իրականացնել փոխադարձ այցելություններ ու համատեղ միջոցառումներ գործընկեր դպրոցների հետ: ✓ Համակարգչային տեխնիկայի պակասի, պրոյեկտորի և էլեկտրոնային գրատախտակի բացակայության պատճառով հաճախ հնարավորություն չի լինում մասնակցել տարբեր կրթական կառույցների կողմից կազմակերպվող առցանց խորհրդատվություններին ու հանդիպումներին: ✓ Ծնողների մոտ նկատվում է ներհամայնքային միջոցառում-ներին մասնակցության, նախաձեռնողականության պակաս:

✓ Դպրոցը ակտիվորեն համագործակցում է այլ դպրոցների և կրթական կառույցների հետ: Մասնավորապես, սերտ աշխատանքային ու բարեկամական հարաբերություններ են ձևավորվել Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի հետ, որի ուսուցիչները և աշակերտները արդեն մի քանի անգամ հյուրընկալվել են մեր դպրոցում: ✓ Ծնողական խորհուրդն ակտիվորեն ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նիստերի, ինչպես նաև տնօրենի և ուսուցիչների հետ ծնողների հաճախակի հանդիպումների և քննարկումների արդյունքում մշտապես վեր են հանվում ծնողների անհանգստությունները և դրանց տրվում է լուծում:	

❖ **Մանկավարժական և ուսումնաօժանդակ համակազմ**

Դպրոցում աշխատում է 21 ուսուցիչ և 18 ոչ ուսուցչական աշխատող:

Բոլոր ուսուցիչները՝ բացառությամբ 1 ուսուցչի, ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Ուսուցիչներն աշխատում են միջին ծանրաբեռնվածությամբ:

Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են տարբեր մասնագիտական սեմինարների, դասընթացների և վերապատրաստումների: Յուրաքանչյուր տարի ուսուցիչների 1/5-ը մասնակցում է ուսուցիչների հերթական ատեստավորման: 2023 թ. չորս ուսուցիչ մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը և հաջողությամբ հաղթահարել այն՝ գրանցելով բարձր արդյունքներ:

Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես մենթոր դպրոց, 2023 թ. մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել են հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների ՀՊՉ-ի և առարկայական ծրագրերի ներդրման

նպատակով ԿՁՆԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներ, որոնց ժամանակ դպրոցի տնօրենի պաշտոնակատարը և երեք ուսուցիչներ հանդես են եկել որպես վերապատրաստողներ, իսկ դպրոցի մյուս ուսուցիչները հաջողությամբ մասնակցել են վերապատրաստումներին:

Դպրոցում տնօրինության կողմից ստեղծվել է աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորության մթնոլորտ: Պարբերաբար աշխատանքներ են տարվում մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացման ուղղությամբ, մանկավարժներին իրականացվում է աջակցություն մեթոդական, հետազոտական և փորձարարական աշխատանքներ իրականացնելու համար: Աշխատանքի մեջ լավ արդյունքներ գրանցած մանկավարժները պարբերաբար պարգևատրվում են շնորհակալագրերով, երբեմն նաև պարգևավճարներով:

Դպրոցում գործում է առարկայական 4 մեթոդմիավորում՝

- Հումանիտար,
- Բնագիտական,
- Օտար լեզուների,
- Դասվարական:

Ուսուցիչների թվաքանակը ըստ տարիքի



Ուսուցիչների թվաքանակը ըստ մանկավարժական ստաժի



Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Գրեթե բոլոր ուսուցիչները ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: ✓ Դպրոցում բոլոր առարկաները դասավանդում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետները: ✓ Մանկավարժական համակազմում կան ինչպես երիտասարդ ուսուցիչներ, ովքեր աչքի են ընկնում իրենց ակտիվությամբ, մշտական պրպտումներով, եռանդով, այնպես էլ փորձառու և վաստակաշատ ուսուցիչներ, ովքեր շարունակում են աշխատել նույն ջանասիրությամբ ու պատասխանտվությամբ, իրենց փորձով կիսվելով նաև երիտասարդ սերնդի հետ:	✓ Ուսուցիչների մի մասը դեռևս դժվարանում է ՏՀՏ գործիքները և միջոցները լիարժեքորեն օգտագործել դասապրոցեսում: ✓ Որոշ դեպքերում ուսուցիչների մոտ նկատվում է նախաձեռնողականության և ինքնուրույնության պակաս: ✓ Որոշ դեպքերում առաջանում են դժվարություններ նոր ՀՊՉ-ով նախատեսված փոփոխությունների ներդրման և կիրառման ժամանակ:

✓ Ուսուցիչների կողմից բարեխղճորեն վարվում են պարտադիր գործածության բոլոր փաստաթղթերը: Էլեկտրոնային մատյանում լրացումներն ու գնահատումն իրականացվում է ժամանակին և ամբողջությամբ: ✓ Ուսուցիչներից երեքը հանդիսանում են մենթորներ և պարբերաբար իրականացնում են վերապատրաստումներ և սեմինարներ և մեր դպրոցի, և տարածաշրջանի այլ դպրոցների ուսուցիչների համար: ✓ Ուսուցիչներից չորսը հաջողությամբ մասնակցել են կամավոր ատեստավոր-մանը՝ գրանցելով բարձր արդյունքներ:	

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Դպրոցում ստեղծվել է աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորության մթնոլորտ: ✓ Պարբերաբար աշխատանքներ են տարվում մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացման ուղղությամբ, իրականացվում է աջակցություն մեթոդական, հետազոտական և փորձարարական աշխատանքներ իրականացնելու համար:	✓ Դեռևս ուսուցիչների մեծ մասը խուսափում է կամավոր ատեստավորմանը մասնակցությունից: ✓ Ուսուցիչների գերակշիռ մասը գյուղաբնակ է, և կենցաղային հոգսերի ու աշխատանքների առատության պատճառով հաճախ չեն կարողանում բավարար ժամանակ տրամադրել ինքնակրթությանը:

✓ Աշխատանքի մեջ լավ արդյունքներ գրանցած մանկավարժները պարբերաբար խրախուսվում են, պարգևատրվում են շնորհակալագրերով, երբեմն նաև պարգևավճարներով: ✓ Մշտապես խրախուսվում է ուսուցիչների մասնակցությունը տարբեր վերապատրաստում-ներին, սեմինարներին և ժողովներին:	✓ Ուսուցիչների մոտ երբեմն նկատվում է սեփական հաջողությունների ու ձեռքբերումների մասին բարձրաձայնելու ու կարևորելու բացակայություն:

❖ **Աշակերտական համակազմ**

2023-2024 ուստարում դպրոցում սովորում է 158 աշակերտ: Աշակերտների քանակն ըստ դասարանների՝

1-ին դասարան՝ 9 աշակերտ,
2-րդ դասարան՝ 14 աշակերտ,
3-րդ դասարան՝ 18 աշակերտ,
4-րդ դասարան՝ 13 աշակերտ,
5-րդ դասարան՝ 18 աշակերտ,
6-րդ դասարան՝ 13 աշակերտ,
7-րդ դասարան՝ 18 աշակերտ,
8-րդ դասարան՝ 18 աշակերտ,
9-րդ դասարան՝ 20 աշակերտ,
10-րդ դասարան՝ 4 աշակերտ,
11-րդ դասարան՝ 5 աշակերտ,
12-րդ դասարան՝ 8 աշակերտ:

Դպրոցում գործում է նախակրթարան, ուր 2023-2024 ուստարում հաճախում է 11 սան:

2023 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին դպրոց է ընդունվել Արցախից բռնի տեղահանված 5 աշակերտ, որոնք ուսուցիչների և աշակերտների ջերմ ու հոգատար վերաբերմունքի շնորհիվ շատ արագ ադապտացվել են դպրոցական համայնքին:

❖ **Նորարարություն և տեխնոլոգիաներ**

Այսօրվա դպրոցը կարող է հաջողության հասնել այն դեպքում, եթե այն ամեն առումով նորարական է, այնտեղ չեն անտեսվում նոր տեխնոլոգիաներն ու նրանց

հետ կապված հնարավորությունները: Այս առումով դպրոցի համար մեծ ձեռքբերում է Արմաթ ինժեներական լաբորատորիայի առկայությունը: Հայաստանը ՏՏ տեխնոլոգիաների զարգացման հարցում ունի հեռանկար, և այս լաբորատորայի շնորհիվ աշակերտները հնարավորություն ունեն փոքր տարիքից ծանոթանալ ծրագրավորմանը, եռաչափ մոդելավորմանը, ռոբոտաշինությանը, որը կօգնի հետագայում ճիշտ մասնագիտություն ընտրելու հարցում:

ՏՀՏ տեխնոլոգիաները լայնորեն կիրառվում են նաև դասապրոցեսի ընթացքում՝ տեսադասերի, ինտերակտիվ վարժությունների, առարկայական սահիկաշարերի պատրաստման և ցուցադրության միջոցով:

Սակայն, համակարգչային տեխնիկայի ոչ բավարար քանակը թույլ չի տալիս լիովին կիրառել ՏՀՏ տեխնոլոգիաները և մեթոդները:

Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Ուսուցիչների մեծ մասը լայնորեն կիրառում է ՏՀՏ գործիքները՝ տեսադասերի, ինտերակտիվ վարժությունների, առարկայական սահիկաշարերի պատրաստման և ցուցադրության միջոցով: ✓ Դպրոցի ֆինանսական հաշվետվությունները, թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները և այլ անհրաժեշտ տեղեկատվու-թյուններ սահմանված կարգով տեղադրվում են դպրոցի պաշտոնական կայք-էջում: ✓ Դպրոցի ֆեյբուքյան էջում լուսաբանվում են իրականացված միջոցառումները, ուսուցիչների և աշակերտների հաջողություններն ու ձեռքբերումները, դպրոցի անցուդարձից հետաքրքիր դրվագներ:	✓ Ուսուցիչների մի մասը դեռևս դժվարանում է ՏՀՏ գործիքները և միջոցները լիարժեքորեն օգտագործել դասապրոցեսում: ✓ Պրոյեկտորի և էլեկտրոնային գրատախտակի բացակայության պատճառով տեսադասերը և միջոցառումների ժամանակ ցուցադրությունները կատարվում են սովորական էկրանով, ինչը առաջացնում է անհարմարություն: ✓ Համակարգիչների ոչ բավարար քանակի պատճառով հնարավոր չի լինում ինֆորմատիկայի դասերն իրականացնել ըստ պահանջի:

✓ Ուսուցիչները և աշակերտները ըստ անհրաժեշտության օգտվում են տարբեր էլեկտրոնային ռեսուրսներից ու պաշարներից: ✓ Մատենավարությունը ամբողջությամբ և պարտաճանաչ կերպով վարվում է էլեկտրոնային եղանակով:	

❖ **Դպրոցի տրամադրած կրթության որակը**

Դպրոցում ուսումնական գործընթացն իրականացվում է համաձայն չափորոշչային պահանջների: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան, կազմվում է դպրոցի ուսումնական պլանը, մշակվում են առարկայական թեմատիկ պլանները: Ուսումնական տարվա ընթացքում տնօրինության վերահսկողությամբ ապահովվում է աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, կազմակերպվում են առարկայական շաբաթներ, բաց դասեր, քննարկումներ և այլ միջոցառումներ: 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում հավուր պատշաճի կազմակերպվում են սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունները: Տնօրինության և մեթոդմիավորումների նախագահների կողմից պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ և առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ:

Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ստեղծված են անհրաժեշտ պայմաններ և հարմարեցված միջավայր կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովման համար: Ուսումնական պրոցեսի ընթացքում սովորողների համար ստեղծվում են բոլոր պայմանները և հոգեբանական մթնոլորտը ազատ խոսքի, դատողություն անելու, վերլուծելու, հաղորդակցվելու, որոշումներ ընդունելու համար, ինչի շնորհիվ ձևավորվել է բազմակարծիք և մասնակցային արժեքային միջավայր: Եվ մանկավարժական կոլեկտիվում, և աշակերտական համայնքում ձևավորվել է թիմային աշխատանքի և համագործակցային հարաբերությունների միջավայր:

2023-2024 ուստարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ուսումնական գործընթացն իրականացվում է Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի պահանջների հիման վրա, ինչը հանգեցնում է կրթության որակի բարձրացմանը և ուսուցիչների կարողությունների, հմտությունների զարգացմանը:

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Դպրոցի բոլոր ուսուցիչները մասնակցել են հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների ՀՊՉ-ի և առարկայական ծրագրերի ներդրման նպատակով ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստումներին, ծանոթ են նորություններին և փոփոխություններին և կիրառում են դրանք: ✓ Առարկայական թեմատիկ պլանները կազմված են նոր չափորոշչային պահանջներին համապատասխան: ✓ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում են գործում են ուսումնական խմբակներ: ✓ Ուսումնական տարվա ընթացքում 7-րդ դասարանում տարբեր առարկաներից նախատեսված են նախագծային աշխատանքներ: ✓ 2-րդ դասարանում, համաձայն նոր չափորոշչի, իրականացվում է ոչ միավորային՝ բնութագրող գնահատում: ✓ Տնօրինության և մեթոդմիավորումների նախագահների կողմից պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ և դասալսումներ:	✓ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում որոշ դասագրքերի բացակայությունն ու ուսումնական նյութերի սակավությունը դժվարություններ է առաջացնում: ✓ Որոշ առարկաների նկատմամբ, հատկապես ավագ դասարաններում, կա հետաքրքրության որոշակի պակաս:

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահովման վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Եվ մանկավարժական կոլեկտիվում, և աշակերտական համայնքում ձևավորվել է թիմային աշխատանքի և համագործակցային հարաբերությունների միջավայր: ✓ Ուսումնական պրոցեսի ընթացքում սովորողների համար ստեղծվում են բոլոր պայմանները և հոգեբանական մթնոլորտը ազատ խոսքի, դատողություն անելու, վերլուծելու, հաղորդակցվելու, որոշումներ ընդունելու համար: ✓ Դասղեկական ժամերի ընթացքում քննարկվում են յուրաքանչյուր դասարանում առաջացած խնդիրներն ու դժվարությունները, դրանց տրվում է լուծում:	✓ Դպրոցի մանկավարժահոգե-բանական աջակցող խմբի կաբինետի բացակայության պատճառով ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը դժվարանում է: ✓ Նկատվում է որոշ աշակերտների, հատկապես ավագ դասարանների տղաների, դպրոցում անցկացվող միջացառումներին մասնակցու-թյան խուսափում: ✓ Աշակերտներից շատերի մոտ չի նկատվում նախաձեռնողակա-նություն:

❖ **Դպրոցի կատարած ծախսերի վերլուծությունը**

Դպրոցի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեի հատկացումներն են, որոնցից էլ ձևավորվում է դպրոցի բյուջեն: Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են՝

- ✓ Աշխատավարձ,
- ✓ Ջեռուցում, էլեկտրաէներգիա,
- ✓ Կոմունալ այլ ծառայություններ,
- ✓ Սնունդ
- ✓ Տնտեսական ապրանքներ,
- ✓ Գրենական ապրանքներ
- ✓ Մասնագիտական ծառայություններ,
- ✓ Այլ ծախսեր:

Բյուջեի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի և դպրոցի պահպանման ծախսերի վճարմանը, և, ցավոք, ուսումնական նպատակների համար

հնարավորություն է լինում հատկացնել խիստ սահմանափակ միջոցներ: Ուսումնական նպատակով ծախսերը հիմնականում կատարվում են հետևյալ ուղղություններով՝

- ✓ Վերապատրաստումներ,
- ✓ Հետազոտական և նախագծային աշխատանքներ,
- ✓ Համակարգչային ծառայություններ:

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
✓ Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների փոխանցումները կատարվում են ժամանակին: ✓ Դպրոցն իրականացնում է ֆինանսական միջոցների արդյունավետ և օբյեկտիվ կառավարում: ✓ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը թափանցիկ է: ✓ Ձեռք բերված գույքը և այլ պարագեները պարտադիր կերպով հաշվառվում են և ավելացվում դպրոցի գույքացուցակում:	✓ Բյուջեի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի և դպրոցի պահպանման ծախսերի վճարմանը և ուսումնական նպատակների համար հնարավորություն է լինում հատկացնել խիստ սահմանափակ միջոցներ: ✓ Կա դրամաշնորհային և հովանավորչական ծրագրերի սակավություն:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը բխում է դպրոցի գործունեության հիմնական նպատակից՝ ապահովել սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը՝ հաշվի առնելով սովորողների կրթական պահանջմունքներն ու նախասիրությունները, դպրոցի առանձնահատկությունները, համայնքի կարիքներն ու պահանջները, սովորողների համար ստեղծել բարենպաստ, ապահով և հաճելի կրթական միջավայր: Դպրոցի զարգացման ծրագրի գլխավոր նպատակը հնարավոր է արդյունավետորեն իրագործել, եթե դպրոցն ունենա անհրաժեշտ պայմանները և ապահովի հիմնական ընդհանուր բարձրորակ հանրակրթական ծրագիր: Այս ամենին հասնելու համար մեր դպրոցի առջև դրված են հետևյալ նպատակները՝

❖ **Նպատակ 1**

Դպրոցի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավում:

Խնդիրներ

- Ավելի մաքուր, գեղեցիկ և հարմարավետ, ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ստեղծում,
- Ֆիզկուլտուրա առարկայի դասերը ցուրտ եղանակին ևս մարզադահլիճում անցկացնելու հնարավորության ստեղծում,
- Աշակերտների համար գրադարանից օգտվելու մատչելիության ապահովում:

❖ **Նպատակ 2**

Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում և թարմացում:

Խնդիրներ

- Աշակերտների համար լիարժեք համակարգչային կրթության ստանալու հնարավորության ստեղծում,
- Բնագիտական առարկաների ուսուցման արդյունավետության և հետաքրքրքրության բարձրացում,
- ԿԱՊԿՈՒ սովորողների համար բարենպաստ միջավայրի ստեղծում:

❖ **Նպատակ 3**

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման կատարելագործում:

Խնդիրներ

- Դպրոցի՝ որպես նորարարությունների ակտիվ ներդրման և համայնքի կրթամշակութային կենտրոնի դերի աճ,
- Կրթության որակի բարձրացում,
- Կրթական և մեթոդական նորարարությունների ներմուծում՝ միտված կրթության բովանդակության արդիականացմանը:

❖ **Նպատակ 4**

Կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացում:

Խնդիրներ

- Սովորողների ինտեգրում հասարակական կյանքին, նրանց մոտ ազգային և համամարդկային արժեքների ձևավորում,
- Սովորողների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակության բարձր մակարդակի ապահովում,
- Սովորողների առավելագույն ընդգրկում արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին,
- Սովորողների ֆիզիկական դաստիարակության աճ,
- Աշակերտական ինքնավարության կատարելագործում:

❖ **Նպատակ 5**

Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ համագործակցության ամրապնդում:

Խնդիրներ

- Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում և դպրոցի գործունեությանը ավելի նշանակալի մասնակցության ապահովում,

- Դպրոց-պետություն, դպրոց-համայնք երկխոսության արդյունավետ հարթակների խրախուսում,
- Դպրոց-համայնք-ծնող կապի ամրապնդում,
- Ծնողական համայնքի դերի բարձրացում,
- Խորհրդակցական մարմինների արդյունավետ համագործակցություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է. «Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է, որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

Միջնակարգ դպրոցի գործունեությունը իրականացվում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին համապատասխան, այն միտված է իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական, հիմնական և ավագ որակյալ կրթություն տալուն՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել միջին–մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Գարգառի Վ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի գործունեության նպատակն է բավարարել հետևյալ կրթական կարիքները՝

1. Ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կապահովի յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական հմտությունների, քննադատական մտածողության, անհատական ունակությունների զարգացմանը:
2. Լեզվամտածողության, գրագիտության, մաթեմատիկական տրամաբանության հիմքերի ամրապնդումը:
3. Մասնագիտական կողմնորոշման ապահովումը և պարզ աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումն ու զարգացումը:
4. Դրական վարքի ու բարեկիրթ վարվեցողության, կայուն և զարգացած արժեհամակարգի ձևավորումը:
5. Տարրական դպրոցում ձևավորված բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական ու ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքերի ամրապնդումը:
6. Արտակարգ իրավիճակներում, բնական և տեխնածին աղետների ու կենցաղային վտանգավոր իրադրությունների մեջ ճիշտ և արագ կողմնորոշվելու, անհետաձգելի բուժօգնություն ցուցաբերելու հմտությունների ձևավորումը:
7. Հայրենիքի պաշտպանությանն իր մասնակցությունն ունենալու պատրաստակամության և հետագայում զինծառայության անցնելու կարևորության գիտակցման արժևորումը:

8. Կրթական երեք աստիճաններում կրթության առանձնահատուկ պայման-ների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքի ապահովումը:

Մենք, իսկապես, ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ հնարավորություն ունենք կառուցելու ազատ և ուժեղ Հայաստան, իսկ դրա հիմքը հենց դպրոցն է, որը պետք է դաստիարակի հայրենասեր, գիտակից, խելացի, տրամաբանող, բարի, ազնիվ, բարոյական և մարդկային բարձր որակներով օժտված, սեփական իրավունքներն ու պարտականությունները գիտակցող, մեծ ձգտում ունեցող երեխաներ, ում համար գերխնդիրը պետք է լինի արժանապատիվ ու ազատ ապրելը:

Շատ կարևոր է դպրոցի և համայնքի՝ մասնավորապես ծնողների հետ, ակտիվ համագործակցության ապահովումը, ինչը դպրոցը կդարձնի համայնքի սոցիալ-մշակութային, տեղեկատվական, ռեսուրսային կենտրոն:

ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նշված նպատակների և խնդիրների իրականացմանը հասնելու նպատակով մշակել եմ միջոցառումների և գործողությունների պլան-ժամանակացույց, որտեղ մշակված են համապատասխան գործողությունները, հստակեցված են կատարողները և կատարման ժամկետները՝

հ/հ	Միջոցառում / Գործողություն	Արդյունք	Կատարող / Պատաս-խանատու	Ֆինանսավոր-ման աղբյուր	Կատարման ժամկետ
Դպրոցի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն ու գործողությունները					
1	Դասասենյակների ընթացիկ նորոգում	Կունենանք ավելի մաքուր, գեղեցիկ և հարմարավետ միջավայր	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորչական միջոցներ	մինչև 2025 թ. ավարտ
2	Մարզադահլիճի ջեռուցում	Հնարավորություն կստեղծվի ֆիզկուլտուրա առարկայի դասերը ցուրտ եղանակին ևս անցկացնել մարզադահլիճում			մինչև 2026 թ. ավարտ
3	Գրադարանի տեղափոխում դպրոցի շենք	Գրադարանից օգտվելը աշակերտների համար կդառնա ավելի մատչելի			մինչև 2024 թ. ավարտ
4	Դպրոցի տարածքի բարեկարգում և կանաչապատում	Կունենանք ավելի գեղեցիկ և հաճելի միջավայր			Յուրաքանչյուր տարի

5	Ցանկապատի վերանորոգում	Դպրոցի տարածքը կդառնա ավելի գեղեցիկ և ապահով	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորչական միջոցներ	մինչև 2024 թ. ավարտ
Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն ու գործողությունները					
6	Նոր դպրոցական գույքի՝ սեղանների, նստարանների և գրապահարանների ձեռքբերում	Դպրոցական միջավայրը կդառնա ավելի հարմարավետ և գեղեցիկ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորչական միջոցներ	մինչև 2025 թ. ավարտ
7	Համակարգչային սենյակի վերազինում. համակարգիչների, պրոյեկտորի, էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում	Աշակերտները հնարավորություն կստանան ստանալ լիարժեք համակարգչային կրթություն			մինչև 2024 թ. ավարտ
8	Ֆիզիկայի լաբորատորիայի սարքավորումների և լաբորատոր նյութերի թարմացում	Բնագիտական առարկաների ուսուցումը կդառնա ավելի արդյունավետ և հետաքրքիր			մինչև 2024 թ. ավարտ
9	Կենսաբանության և քիմիայի կաբինետի ստեղծում				մինչև 2025 թ. ավարտ

10	Դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցող խմբի կաբինետի ստեղծում	ԿԱՊԿՈՒ սովորողների համար կստեղծվի ավելի բարենպաստ միջավայր	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող	Պետական բյուջե	մինչև 2024 թ. ավարտ
11	Ընթերցասրահի ստեղծում	Դպրոցում կխթանվի ընթերցասիրությունը			մինչև 2025 թ. ավարտ
12	ՆԶՊ դասասենյակի ստեղծում	ՆԶՊ դասաժամերը կանցնեն ավելի արդյունավետ ու նպատակային			մինչև 2024 թ. ավարտ
Կազմակերպչական և մեթոդական աշխատանքների ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն ու գործողությունները					
13	Անձնակազմի ինտենսիվ վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ կարողունակություններ վրա հիմնված կրթության բաղադրիչին անցնելու նպատակով	Մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման կատարելագործում	Տնօրեն, փոխտնօրեն, ՄՄ նախագահներ	-	Յուրաքանչյուր տարի
14	Վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ նախագծային ուսուցման, ուսումնահետազոտական աշխատանքների անցկացման վերաբերյալ				

15	ՏՀՏ գործիքների հետագա ընդլայնման համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման կատարելագործում	Տնօրեն, փոխտնօ-րեն, ՄՄ նախագահ-ներ	-	Յուրաքանչ-յուր տարի
16	Մեթոդական սեմինարների, քննարկումների, փորձի փոխանակման միջոցառումների կազմակերպում՝ այլ գործընկերներ դպրոցների հետ սերտ գործակցությամբ				
17	Մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար պայմանների ստեղծում				
Կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն ու գործողությունները					
18	Անգլերեն առարկայի՝ որպես երրորդ օտար լեզվի ներդրում	Կբարձրանա կրթության որակը և ուսուցման արդյունավե-տությունը	Տնօրեն	-	2024 թ.
19	Առարկայական միամսյակների անցկացման պրակտիկայի ապահովում		Տնօրեն, փոխտնօ-րեն, ՄՄ նախագահ-ներ	-	Յուրաքանչ-յուր տարի

20	Շնորհալի սովորողների բացահայտում՝ նրանց ընդգրկելով համադպրոցական միջոցառումներին, ցերեկույթներին և մրցույթներին	Կբարձրանա կրթության որակը և ուսուցման արդյունավե-տությունը	Տնօրեն, փոխտնօ-րեն, ՄՄ նախագահ-ներ, դասղեկներ	-	Յուրաքանչ-յուր տարի
21	Բնագիտական առարկաների նկատմամբ սովորողների հետքրքրությունը խթանելու նպատակով աշակերտական կոնֆերանսների, մրցույթների, վիկտորինաների, ֆորումների կազմակերպում				
22	Արվեստագետների, գրողների, գիտության և ռազմարվեստի ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում				
23	Հայաստանյան տարբեր պատմամշակութա-յին օջախներ ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում				

24	Գործընկեր դպրոցների հետ գործակցությամբ աշակերտական կոնֆերանսների, նախագծային աշխատանքների, փորձի փոխանակման տարբեր միջոցառումների կազմակերպում	Կբարձրանա կրթության որակը և ուսուցման արդյունավետությունը	Տնօրեն, փոխտնօրեն, ՄՄ նախագահներ	-	Յուրաքանչյուր տարի
Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ նախատեսվող միջոցառումներն ու գործողությունները					
25	Շրջանավարտների խորհրդի ձևավորում	Կառավարման և խորհրդակցական մարմինների դերը կբարձրանա և դպրոցի գործունեությանը ավելի նշանակալի մասնակցություն կունենան	Տնօրեն	-	2024 թ.
26	Դպրոցի գործունեությանը կառավարման խորհրդի մասնակցության ավելացում		Տնօրեն		Յուրաքանչյուր տարի
27	Ծնողների համար հոգեբանական-մանկավարժական կրթության կազմակերպում		Տնօրեն, հոգեբան		
28	Ծնողների հետ հանդիպումների ու շարունակական աշխատանքների կազմակերպում		Տնօրեն, փոխտնօրեն, դասղեկներ		
29	Աշակերտական խորհրդի ինքնավարության կատարելագործում		Տնօրեն, փոխտնօրեն		

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Ծրագրի կատարման և դրանում արտացոլված նպատակների և գործողությունների իրականացման հիմնական պատասխանատուն, իհարկե, դպրոցի տնօրենն է: Տնօրենը սահմանում է աշխատողների աշխատանքային պարտականությունները, աշխատանքային ռեժիմը, ստեղծում պայմաններ նրանց մասնագիտական որակավորման բարձրացման համար, խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը, վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը, ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար:

Սակայն դպրոցի գործունեությունը լիարժեք և արդյունավետ կազմակերպելու գործում անչափ կարևոր է կառավարման և խորհրդակցական բոլոր մարմինների՝ կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցված ու բարեխիղճ աշխատանքը:

Դպրոցի գործունեությունը պետք է հենվի ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքների վրա, և այն պետք է լինի թափանցիկ: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է, որ դպրոցի **կառավարման խորհուրդը**՝

1. Մասնակից լինի դպրոցի ամենօրյա բնականոն գործունեությանը:
2. Դպրոցում մասնակցի լրացուցիչ ծրագրերի իրականացմանը:
3. Մասնակից լինի դպրոցի շենքի, օժանդակ տարածքի, նոր գույքի ձեռքբերման և պահպանության գործերին:
4. Մասնակցի դպրոցի պահպանման համար լրացուցիչ միջոցների հայթայթման գործին:
5. Մասնակցի դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացման աշխատանքներին:

Մանկավարժական խորհուրդը պետք է պատշաճորեն կատարի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, քննարկի նաև զարգացման

ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնա ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրի ընդունված որոշումների համար:

Ծնողական խորհուրդը պետք է դառնա առավել արդյունավետ վերահսկողական օղակ: Այս արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է՝

1. Ամրապնդել դպրոց-ծնող կապը, որը կնպաստի դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների մակարդակի բարձրացմանը:
2. Կազմակերպել դպրոց-աշակերտ-ծնող օղակներն ամրապնդող միջոցառումներ:
3. Ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդների հետ:
4. Ապահովել ծնողների մասնակցությունը աշակերտների արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին:
5. Կազմակերպել հանդիպումներ, խորհրդակցություններ և խորհրդատ-վություններ ծնողների համար, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության, վիճակի ու հեռանկարային ծրագրերի, ուսումնա-դաստիարակչական աշխատանքների մասին:
6. Լսել և քննարկել ծնողներին հետաքրքրող հարցեր:
7. Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացման գործին:

Աշակերտական խորհուրդը պետք է ակտիվ մասնակցություն ունենա դպրոցի շրջանակներում աշակերտներին վերաբերող հարցերում որոշումների կայացմանը, կարողանա ազատ արտահայտել իր կարծիքը, լինի նախաձեռնող:

Կարծում եմ, որ դպրոցը միայն կշահի, եթե աշակերտական խորհուրդը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան ազատորեն կարծիք ներկայացնի դպրոցի կառավարման և խորհրդակցական մյուս մարմիններին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատական գործընթաց է:

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն անհրաժեշտ են ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Ծրագրում ներառված յուրաքանչյուր գործողություն և իրականացված արդյունք գնահատելու համար մշակել եմ հետևյալ չափանիշները՝

N	Գնահատման ենթակա գործողություն	Արդյունքի գնահատականը	Արդյունքի գնահատման չափանիշները
1	Դպրոցի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ (դասասենյակների վերա-նորոգում, մարզադահլիճի ջեռուցում, գրադարանի տեղափոխում դպրոցի շենք և այլն)	Գերազանց	Նախատեսված աշխատանքները ամբողջությամբ կատարվել են:
		Լավ	Նախատեսված աշխատանքների մեծ մասը կատարվել է:
		Բավարար	Նախատեսված աշխատանքների մի մասը կատարվել է:
		Անբավարար	Նախատեսված աշխատանքները չեն կատարվել:
2	Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ (նոր դպրոցական գույքի ձեռքբերում, համակարգչային սենյակի	Գերազանց	Նախատեսված գույքը, տեխնիկան և այլ պարագաները ամբողջությամբ ձեռք են բերվել:
		Լավ	Նախատեսված գույքի, տեխնիկայի և այլ պարագաների մեծ մասը ձեռք է բերվել:

	վերազինում, ֆիզիկայի լաբորատորիայի սարքավորումների և լաբորատոր նյութերի թարմացում և այլն)	Բավարար	Նախատեսված գույքի, տեխնիկայի և այլ պարագաների մի մասը ձեռք է բերվել:
		Անբավարար	Նախատեսված գույքը, տեխնիկան և այլ պարագաները ձեռք չեն բերվել:
3	Կազմակերպչական և մեթոդական աշխատանքների ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործո-ղություններ (անձնակազմի վերապատրաստման դասընթացների, սեմինարների, քննարկումների, փորձի փոխանակման միջոցա-ռումների կազմակերպում և այլն)	Գերազանց	Նախատեսված միջոցառումները, դասընթացները, քննարկումները ամբողջությամբ իրականացվել են, ստեղծված են մասնագիտական զարգացման, ինքնադրսևորման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:
		Լավ	Նախատեսված միջոցառումները, դասընթացները, քննարկումները հիմնականում իրականացվել են, ստեղծված են մասնագիտական զարգացման, ինքնադրսևորման համար անհրաժեշտ գրեթե բոլոր պայմանները:
		Բավարար	Նախատեսված միջոցառումների, դասընթացների, քննարկումների մի մասը իրականացվել է, որոշ չափով ստեղծված են մասնագիտական զարգացման, ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմաններ:

		Անբավարար	Նախատեսված միջոցառումները, դասընթացները, քննարկումները ամբողջությամբ չեն իրականացվել, ստեղծված չեն մասնագիտական զարգացման, ինքնադրսևորման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:
4	Կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ (կոնֆերանսների, մրցույթների, վիկտորինաների, ֆորումների կազմակերպում և այլն)	Գերազանց	Նախատեսված միջոցառումներն ու գործողություններն ամբողջությամբ իրականացվել են, կա կրթության որակի և առաջադիմության զգալի աճ:
		Լավ	Նախատեսված միջոցառումներն ու գործողություններն հիմնականում իրականացվել են, կա կրթության որակի և առաջադիմության աճ:
		Բավարար	Նախատեսված միջոցառումներն ու գործողություններն որոշ չափով իրականացվել են, կա կրթության որակի և առաջադիմության որոշակի աճ:
		Անբավարար	Նախատեսված միջոցառումներն ու գործողությունները չեն իրականացվել, չկա կրթության որակի և առաջադիմության աճ:

5	Դպրոց-համայնք կապերի ամրապնդման, կառավարման, խորհրդակցական և այլ մարմինների հետ նախատես-վող միջոցառումներ ու գործողություններ (կառավարման, ծնողական և աշակերտական խորհուրդների ավելի մեծ ներգրավում ուսումնական գործընթացում, դպրոց-համայնք կապի ամրապնդում, արտա-դպրոցական միջոցառումների և երկարօրյա ուսուցման կազմակերպում)	Գերազանց	Կառավարման և խորհրդակցական մարմինները ակտիվորեն ներգրավված են ուսումնական գործընթացում, առկա է դպրոց-համայնք ամուր և արդյունավետ համագործակցություն, հաճախակի իրականացվում են արտադպրոցական միջոցառումներ, ըստ անհրաժեշտության կազմակերպվում է երկարօրյա ուսուցում:
		Լավ	Կառավարման և խորհրդակցական մարմինները զգալի չափով ներգրավված են ուսումնական գործընթացում, առկա է դպրոց-համայնք արդյունավետ համագործակ-ցություն, երբեմն իրականաց-վում են արտադպրոցական միջոցառումներ, առկա է երկարօրյա ուսուցման կազմակերպման հնարավորություն:
		Բավարար	Կառավարման և խորհրդակցական մարմինները որոշ չափով ներգրավված են ուսումնական գործընթացում, առկա է դպրոց-համայնք բավարար չափով համագործակցություն, հազվադեպ իրականացվում են արտադպրոցական միջոցառումներ, որոշ չափով առկա է երկարօրյա ուսուցման կազմակերպման հնարավորություն:

		Անբավարար	Կառավարման և խորհրդակցական մարմինները ներգրավված չեն ուսումնական գործընթացում, առկա չէ դպրոց-համայնք համագործակցություն:
6	Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Գերազանց	Ստեղծված է բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, և դպրոցի աշխատակիցները, և աշակերտները տիրապետում են իրենց իրավունքներին ու պարտականություններին և ազատ են իրենց կարծիքի արտահայտման հարցում:
		Լավ	Հիմնականում ստեղծված է բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, և դպրոցի աշխատակիցները, և աշակերտները հիմնականում տիրապետում են իրենց իրավունքներին ու պարտականություններին և ազատ են իրենց կարծիքի արտահայտման հարցում:
		Բավարար	Որոշակիորեն ստեղծված է բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, դպրոցի աշխատակիցները և աշակերտները որոշակիորեն տիրապետում են իրենց իրավունքներին ու պարտականություններին և գրեթե ազատ են իրենց կարծիքի արտահայտման հարցում:

		Անբավարար	Ստեղծված չէ բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր, դպրոցի աշխատակիցները և աշակերտները չեն տիրապետում իրենց իրավունքներին ու պարտականություններին և ազատ չեն իրենց կարծիքի արտահայտման հարցում:
7	Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ստեղծման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Գերազանց	Ստեղծված է անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայր: Աշխատանքի մեջ հաջողություններ գրանցած և բարեխիղճ աշխատակիցները խրախուսվում են տնօրինության կողմից:
		Լավ	Հիմնականում ստեղծված է անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայր: Աշխատանքի մեջ հաջողություններ գրանցած և բարեխիղճ աշխատակիցները հաճախակի խրախուսվում են տնօրինության կողմից:
		Բավարար	Որոշակիորեն ստեղծվել է անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայր: Աշխատանքի մեջ հաջողություններ գրանցած և բարեխիղճ աշխատակիցները երբեմն խրախուսվում են տնօրինության կողմից:

		Անբավարար	Անձնակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայր չկա: Աշխատանքի մեջ հաջողություններ գրանցած և բարեխիղճ աշխատակիցները չեն խրախուսվում:
8	Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Գերազանց	Դպրոցում ստեղծված է առողջ բարոյահոգեբանական միջավայր, բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը:
		Լավ	Դպրոցում ստեղծված է առողջ բարոյահոգեբանական միջավայր, գրեթե բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը:
		Բավարար	Դպրոցում ստեղծված է որոշակի առողջ բարոյահոգեբանական միջավայր, որոշ չափով բացառված են հալածանքի, օտարման և բռնության դեպքերը:
		Անբավարար	Դպրոցում չկա առողջ բարոյահոգեբանական միջավայր, բացառված չեն հալածանքի, օտարման և բռնության դեպքերը:

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերը ցանկացած ծրագրի իրականցմանը խոչընդոտող հնարավոր անցանկալի և անսպասելի գործոններն են: Ցանկացած ծրագիր կամ ձեռնարկված գործողություն կապված է մի շարք ռիսկերի հետ, ուստի դպրոցի զարգացման ծրագրի իրականացումն էլ ունի իր ռիսկային գործոնները, որոնք կարող են ինչ-որ կերպ խանգարել ծրագրում նախատեսված նպատակների իրականացմանը:

Դպրոցի զարգացման սույն ծրագրով նախատեսված նպատակների իրագործումը խոչընդոտող ռիսկերից են՝

հ/հ	Գործողություն	Ռիսկերը	Ռիսկերի ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները
1	Դպրոցի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Դպրոցի սահմանափակ ֆինանսական հնարավորություն	Լրացուցիչ ֆինանսական միջոցների ձեռքբերում, դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն, հովանավորների աջակցության ձեռքբերում, տնտեսումներ
2	Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Դպրոցի սահմանափակ ֆինանսական հնարավորություն, նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն	Ֆինանսական միջոցների ճիշտ պլանավորում, լրացուցիչ միջոցների հայթայթում
3	Կազմակերպչական և մեթոդական աշխատանքների ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Դպրոցի աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի խոչընդոտներ	Մանկավարժներին մասնագիտական և մանկավարժական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով վերապատրաստման դասընթացներին ընդգրկում
		ՏՀՏ գործիքների օգտագործման արդյունավետության ցածր մակարդակ:	Էլեկտրոնային կրթական ռեսուրսներից օգտվելու կարողությունների զարգացում

4	Կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Սովորողների մոտիվացիայի ցածր մակարդակ	Օժտված երեխաների հետ տարվող աշխատանքներ, ուսման մեջ հաջողություններ ունեցող սովորողների խրախուսում, կայացած շրջանավարտների հետ հանդիպում
5	Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն	Դպրոցի հեռանկարային ծրագրերին, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը ծնողների ներգրավում
		Շահագրգիռ կողմերի զբաղվածությամբ պայմանավորված ոչ հաճախակի հանդիպումներ	Հեռավար հարթակներում հանդիպումների և քննարկումների կազմակերպում

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր, իսկ դպրոցի ֆինանսավորումը, որպես կանոն, սահմանափակ է: Պետական ֆինանսավորումը բավարարում է հիմնականում աշխատավարձերի, հարկերի, կոմունալ վճարումների, գրենական, տնտեսական միջոցների, անհրաժեշտ ծառայությունների ծախսերի վճարմանը: Այս առումով զարգացման ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել և կատարել իրատեսական պլանավորում՝ հաշվի առնելով դրված նպատակների առաջնահերթությունը: Շատ կարևոր է, որ, անկախ ազատ ֆինանսական միջոցների առկայությունից, տնօրենը կարողանա գտնել ուղիներ առաջին հայացքից անլուծելի թվացող խնդիրների լուծման համար: Ես կարծում եմ, որ հենց դրանով է նաև պայմանավորված տվյալ ուսումնական հաստատության առաջընթացն ու զարգացումը:

Նախատեսված նպատակների իրագործման և անհրաժեշտ նյութա-տեխնիկական պարագաների ձեռք բերման համար կարող են օգտակար լինել տարբեր դրամաշնորհների մասնակցությունը, բարեգործական միջոցառումների կազմակերպումը, բարեգործների օժանդակությունը, ինչպես նաև թույլատրված ձեռնակատիրական գործունեությունը, ինչպիսիք են՝ լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացումը, արտադպրոցական դաստիարակության կազմա-կերպումը, համակարգչային ծրագրերի և լեզվի ուսուցման կազմակերպումը, ինչպես նաև ուսումնաարտադրական գործունեության ծավալումը և արտադրանքի իրացումը:

Զարգացման ծրագրում առանձնացված նպատակների իրականացման համար անհրաժեշտ են մարդկային, բյուջետային և նյութատեխնիկական հետևյալ միջոցները՝

h/h	Գործողություն	Մարդկային ռեսուրս	Ֆինանսավորման աղբյուր	Նյութատեխնի-կական միջոցներ
1	Դպրոցի շենքային պայմանների և ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, վարչատնտե-սական համակարգող, շինարարական կազմակեր-պություն	Պետական բյուջե, դրամաշնոր-հային ծրագրեր, հովանավոր-չական միջոցներ	Անհրաժեշտ շինարարական պարագաներ

2	Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ընթացիկ նորոգող	Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, հովանավորչական միջոցներ	Գույք, մարզագույք, համակարգչային տեխնիկա, սարքավորումներ
3	Կազմակերպչական և մեթոդական աշխատանքների ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, փոխտնօրեն, ՄՄ նախագահներ, վերապատրաստողներ	Դպրոցի բյուջե	Մեթոդական գրականություն, էլեկտրոնային ռեսուրսներ
4	Կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման ուղղությամբ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, փոխտնօրեն, ՄՄ նախագահներ, ուսուցիչներ	Դպրոցի բյուջե	Դիդակտիկ պարագաներ, մեթոդական գրականություն, առարկայական պաստառներ, էլեկտրոնային ռեսուրսներ
5	Կառավարման և խորհրդակցական մարմինների հետ նախատեսվող միջոցառումներ ու գործողություններ	Տնօրեն, խորհրդի անդամներ, ծնողներ, ՏԻՄ ներկայացուցիչներ	-	Միջոցառումների կազմակերպման անհրաժեշտ պարագաներ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկումը դպրոցի խորհրդի օրենսդրական պարտականությունն է: Սակայն զարգացման ծրագրի մոնիթորինգը տնօրենի ամենօրյա աշխատանքային պարտականությունն է, որն իր մեջ ներառում է՝

- ծրագրի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծություն, վերլուծության արդյունքում միջոցառումների վերանայում, այդ ուղղությամբ մանկավարժական խորհրդի առաջարկությունների քննարկում,
- ուսուցիչների և սովորողների գործունեության շարունակական թեմատիկ, ընթացիկ, անհատական և կանխարգելիչ վերահսկողության իրականացում,
- ծրագրի իրականացման տարեկան ամփոփում և արդյունքների ներկայացում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդներին:

Արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- մշտապես հետևել աշխատանքների ընթացքին, լինել աչալուրջ,
- անցկացնել ներքին գնահատում,
- պարբերաբար պահանջել տեղեկություն կատարված աշխատանքների վերաբերյալ,
- միջոցներ ձեռնարկել թերությունների վերացման ուղղությամբ,
- գնահատել արդյունքը:

Ծրագիրը մշակելիս հիմք են ընդունվում դպրոցի կրթական, ֆինանսական, տնտեսական և այլ ցուցանիշներ: Այն, լինելով հնգամյա հեռանկարային ծրագիր, որքան էլ ճիշտ պլանավորված լինի և որքան էլ ճշգրտորեն հաշվարկված լինեն խնդիրներն ու գործողությունները, ժամանակի ընթացքում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, հնարավոր է ենթարկվի որոշակի փոփոխությունների և սրբագրումների: Այդ պատճառով վերահսկման ամենաարդյունավետ միջոցներից մեկը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Դրա համար անհրաժեշտ է.

1. յուրաքանչյուր տարի հաստատության կողմից խորհրդին ծրագրի կատարման վերաբերյալ ամենամյա հաշվետվության ներկայացում հետևյալ ձևաչափով, որը ներառում է համապարփակ տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականացման, կատարված աշխատանքների, ինչպես նաև գործողության չկատարման կամ մասնակի կատարման պատճառների վերաբերյալ՝

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ							
N	Միջոցառում / գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման / գործողության չկատարման կամ մասնակի կատարման /առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջար-կություններ	Նշումներ
1							
2							
3							
...							

2. Բացի այս՝ ընդհանուր հաշվետվությունից, զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի համար համապատասխան հաշվետվությունների մշակում և ներկայացում, օրինակ՝

Մանկավարժական համակազմ – Հերթական ատեստավորման, կամավոր ատեստավորման, տարակարգ ունեցող, տարբեր վերապատրաստումների և դասընթացների մասնակից մանկավարժների քանակը և այդ քանակի փոփոխությունը հաշվետու ժամանակահատվածում,

Աշակերտական համակազմ – հաշվետու ժամանակահատվածում օլիմպիադաների մասնակից, օլիմպիադաներում հաջողություններ գրանցած, ԲՈՒՀ և ՄՄ ուսումնական հաստատություններ ընդունված աշակերտների թվաքանակ,

և այլն:

Ելնելով ժամանակի պահանջներից և իրավիճակից զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխության և լրամշակման:

ՎԵՐՋԱԲԱՆ

Սույն զարգացման ծրագրի գլխավոր նպատակն է ապագայում ունենալ դպրոց, որտեղ կրթությունը ծառայում է ազգային շահերին, համապատասխանում է տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին, ապահովում է բոլորի համար հավասար պայմաններ և հնարավորություններ:

Այսօրվա և ապագայի դպրոցի իմ տեսլականն այն դպրոցն է, որը զարգացման կենտրոն է, այն ոչ միայն գիտելիք ձեռք բերելու և դաս կերտելու դարբնոց է, այլ նաև բազմաթիվ հմտությունների և կարողությունների ձեռքբերման հաստատություն է: Շատ կարևոր է երեխաների ֆիզիկական և հոգևոր դաստիարակությունը, գեղագիտական և գեղարվեստական ուսուցումը: Դպրոցը պետք է երեխային հնարավորություն ընձեռի ինքնադրևսորվելու, օգնի երեխային բացահայտելու ինքն իրեն: Դաստիարակության գործում ցանկալի արդյունքի հասնելու միակ ուղին անսահման սերն ու հոգատարությունն է, որը պետք է ունենա երեխայի հանդեպ և՝ ընտանիքը, և՝ դպրոցը, և՝ հասարակությունը: Երեխային համբերատար պետք է դաստիարակել սեփական օրինակով, նրան վերաբերվել ինչպես հավասարը հավասարի, ամենակարևորը՝ հարգանքով:

Իմ գերագույն նպատակներից մեկն այնպիսի դպրոց ունենալն է, ուր ոտք դնող ամեն քաղաքացի՝ լինի աշակերտ, ծնող, թե ուսուցիչ, ընդունի այն, ինչպես իրենը: Միայն այդ դեպքում կարող ենք լիահույս լինել, որ դպրոցին բոլորը կվերաբերվեն հոգատարությամբ, ուշադրությամբ ու կկարևորեն դպրոցի դերը՝ որպես երեխայի ապահով և լուսավոր ապագայի հիմք:

Վստահ եմ, որ ծրագրի իրագործման արդյունքում կունենանք մրցունակ դպրոց, որը կտա ազատ մտածող, ինքնուրույն գործող, բարդ իրավիճակներում կողմնորոշվող, արագ և առանց դժվարության հաղորդակցվող, հանդուրժող, հայ ժողովրդի և համայն մարդկության ստեղծած մշակութային արժեքները ճանաչող և գնահատող հայրենասեր շրջանավարտներ: